ABC DOMAIN

ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Էսէսէլ (SSL) սերտիֆիկատ ստանալու կտրոնի ձեռքբերման ծառայության

1. **Սահմանումներ**

1.1 Էսէսէլ (SSL) սերտիֆիկատ, հետագայում՝ Սերտիֆիկատ, իրենից ներկայացնում է թվային փաստաթուղթ, որը հաստատում է Սերտիֆիկատի մեջ բաց բանալու (public key) և սերտիֆիկատի սուբյեկտի միջև համապատասխանություն (իրավաբանական անձի կամ սերվերի հետ, որի անունը նշված է Սերտիֆիակտի Սուբյեկտ (Subject) դաշտում): Սերտիֆիկատը ստորագրված է Հավաստագրող Կենտրոնի կողմից, ինչը երաշխավորում է Սերտիֆիկատի մեջ պարունակվող տեղեկատվության անփոփոխություն, Սերտիֆիկատի ձևը սահմանվում է RFC-2986 (http://www.ietf.org/rfc/rfc2986.txt): Սերտիֆիկատը արտադրվում է Հավաստագրող Կենտրոնի կողմից:

1.2 Հավաստագրող Կենտրոն, հետագայում ՀԿ՝ մարմին, որն իրականացնում է Սերտիֆիկատի արտադրություն, օգտագործման երկարացում, Սերտիֆիկատի վերարտադրում:

1.3 Սերտիֆիկատը տնօրինող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը տնօրինում է կամ իրավունք ունի օգտագործել այս սերվերը, որի անունը նշված է Սույբեկտ (Subject) դաշտում, և միաժամանակ ի վիճակի է կամ լիազորված է օգտագործել բաց բանալին (public key), որը համապատասխանում է գաղտնի բանալուն (private key):

1.4 Սերտիֆիկատ ստանալու ծառայություն, հետագայում՝ Ծառայություն, այն է՝ "Սերտիֆիկատի արտադրում", "Սերտիֆիկատի երկարաձգում", "Սերտիֆիկատի վերարտադրում", Կատարողի կողմից Պատվիրատուի տրամադրվող Ծառայություններ, որոնք իրենցից ներկայացնում են ուղարկել, արտադրել, երկարաձգել կամ վերարտադրել ՀԿ հարցումներ, Սերտիֆիակտի տրամադրում, դրա հետագա հրապարակում Անձնական Կաբինետում Պատվիրատուին փոխանցելու համար:

1.5 Պատվիրատուի նույնականացնող տվյալներ, այն է՝ տվյալներ, որոնք Պատվիրատուի կողմից ՀԿ փոխանցելու նպատակով ներկայացվում են Կատարողին, որտեղ ՀԿ–ն իրականացնելու է նույնականացնող տվյալների ճշգրտությունը:

1.6 Սերտիֆիակտի հետ կանչ, այն է՝ ՀԿ–ի կողմից Սերտիֆիկատի վաղաժամկետ դադարեցում և այդ մասին տեղեկատվության հրապարակում ՀԿ–ի կայքում և հետ կանչված Սերտիֆիկատների ցանկում:

1.7 Բաժանորդային պայմանագիր – կանոնների ցանկ, որոնք սահմանել է ՀԿ–ն, որոնց համաձայն նկարագրվում է Սերտիֆիկատի տրամադրման պայմանները (http://www.comodo.com/about/comodo-agreements.php):

2. **Ընդհանուր դրույթներ**

2.1 Սերտիֆիկատների տեսակների ցանկը, որոնց նկատմամբ Կատարողը մատուցում է ծառայություններ բերված են Կատարողի կայքում:

2.2 Սերտիֆիկատների ստացման համար Կատարողը աջակցում է Պատվիրատուին ՀԿ–ի կողմից տրամադրվող Սերտիֆիկատների սպասարկման գործընթացում, ինչպես օրինակ Սերտիֆիկատի արտադրություն, գործողության ժամկետնի երկարաձգում, Սերտիֆիկատի վերարտադրում: Նշված ծառայությունները, որոնք տրամադրվում են Կատարողի կողմից Պատվիրատուին կնքված պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի խնդրանքով, պարունակում են հետևյալ գործողությունները

- Սերտիֆիկատի արտադրում, երկարաձգում կամ վերարտադրում դիմումների ուղղորդում ՀԿ
- ՀԿ–ից Պատվիրատուի Սերտիֆիկատ ստանցում
- Սերտիֆիկատի հրապարակում իր անձնական կաբինետում, վերջինս Պատվիրատուին տրամադրելու նպատակով

2.3 Սերտիֆիակտի ստացման ծառայությունները համարվում են Կատարողի կողմից մատուցված Պատվիրատուի անձնական կաբինետում ՀԿ-ից ստացված Սերտիֆիկատի հրապարակումից հետո:

2.4 Սերտիֆիկատ ստանալու Պատվերը իրենից ներկայացնում է Պատվիրատուի համաձայնություն սույն Հավելվածի հետ և հաստատում է այն փաստը, որ Պատվիրատուն ծանոթացել է սույն Հատուկ Պայմանների հետ և համաձայն է կնքվելիք Բաժանորդային պայմանագրերի կամ հրապարակայն ՕՖԵՐՏԱՅԻ հետ:

2.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի կնքման համար նույնականացնող տվյալների տրամադրում և դրանց փոփոխությունը:

2.5.1 Բոլոր տեղեկությունները, որոնք տրամադրել է Պատվիրատուն Կատարողի տվյալներ բազայում տեղադրելու համար, պայմանագրի կնքման համար և Ծառայության մատուցման Հայտի մեջ պետք լինեն ճշգրիտ: Պատվիրատուի կողմից ոչ ճշգրիտ տեղեկությունների տրամադրման դեպքում Սերտիֆիկատը կարող է հետ կանչվել ՀԿ–ի կողմից սույն Հատուկ Պայմանների 6.2. կետի համաձայն:

2.5.2 Կատարողը, ներկայացված տվյալների ճշգրտության վերաբերյալ կասկածների առաջացման դեպքում, իրավունք ունի պահանջել լրացուցիչ տվյալներ կամ պահանջել ներկայացված տվյալների հաստատելում Ծառայության

մատուցման ողջ ժամանակահատվածում: Հարցումն ուղարկվում է այն էլեկտրոնային փոստի միջոցով, որ նշում է Պատվիրատուն Կատարողի տվյալների բազայում գրանցման ժամանակ:

2.5.3 Կատարողը՝ լրացուցիչ տվյալների կամ առկա տվյալների վերաբերյալ նամակում նշված ժամկետում Պատվիրատուի կողմից պատասխան չստանալու դեպքում, իրավասու է

- Մերժել Պատվիրատուի կողմից Սերտիֆիկատի ստացման Ծառայության կատարումը:
- ՀԿ ուղղել հարցում՝ Պատվիրատուի Սերտիֆիակտի կասեցման հարցումով:

2.5.4 Պատվիրատուն, Բաժանորդային պայմանագրի պայմանների համաձայն, իր նույնականացման տվյալների փոփոխման դեպքում պարտավորվում է տեղեկացնել Կատարող ընկերությանը:

2.6 Պատվիրատուն համաձայն է, որ իր կողմից տրամադրված տեղեկատվությունը հայտերի կամ այլ փաստաթղթերի միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով, կտեղափոխվի ՀԿ ստուգման գործընթացի և ներկայացված տվյալների ճշգրտման համար: Այդ դեպքում ՀԿ տեղափոխված տեղեկատվությունը կարող է մշակվել ցանկացած երկրում կամ տարածքում, որտեղ գործում է սերտիֆիկատ տրամադրող կազմակերպությունը:

2.7 Պատվիրատուն պարտավորվում է տեղադրել արտադրված Սերտիֆիկատն այդ սերտիֆիկատում նշված սերվերի վրա Սերտիֆիակտի մեջ նշված գործողության ժամկետից սկսած 12 ամսվա ընթացքում: Պատվիրատուի կողմից սույն պայմանների համաձայն տեղադրված Սերտիֆիկատը գործում է իր մեջ նշված տեղադրման ժամկետից սկսած, բացառությամբ այն դեպքերի, երբ Սերտիֆիկատի գործողության ժամկետը կդադարեցվի սույն Հավելվածի 6.2. կետում նշված պայմանների համաձայն: Պատվիրատուի կողմից չտեղադրված Սերտիֆիակտը կորցնում է իր ուժը, այս դեպքում Պատվիրատուն համաձայն է, որ սույն Պայմանագրի շրջանակներում նշված Ծառայության համար վճարված դրամային միջոցները չեն վերադարձվում Պատվիրատուին:

2.8 Պատվիրատուն պարտավորվում է, ցանկացած պատճառով Սերտիֆիկատի գործողության ժամկետի դադարեցման դեպքում հեռացնել այդ Սերտիֆիկատն այն սերվերից, որտեղ այդ Սերտիֆիկատը տեղադրված է և հետագայում չօգտագործել այդ Սերտիֆիկատը ոչ մի նպատակի համար:

3. **Սերտիֆիկատ ստանալու Ծառայության Ընհանուր Պայմաններ**

3.1 Սերտիֆիակտի ստացման Ծառայությունների մատուցումը պայմանավորված է սերտիֆիկատ տրամադրող ընկերության պահանջներով:

3.2 Պատվիրատուի կողմից Սերտիֆիկատ ստանալու համար տրամադրված տեղեկությունների ստուգումը սահմանվում և կատարվում են ՀԿ–ի կողմից: Կատարողը չի կրում որևէ պատասխանատվություն ստուգման ժամկետի կամ ստուգման արդյունքի վերաբերյալ:

3.3 ՀԿ–ն Պատվիրատուի տեղեկությունների կամ իրավասությունների ստուգման նպատակով իրավասու է պահանջել Պատվիրատուից լրացուցիչ տեղեկություններ:

3.4 Կատարողը չի երաշխավորում Պատվիրատուին ծառայության մատուցումը ՀԿ–ի կողմից Սերտիֆիկատի արտադրման, երկարաձգման կամ վերաարտադրման համար: Այն դեպքում, երբ ՀԿ–ի կողմից մերժվում է Սերտիֆիկատի տրամադրումը Պատվիրատուին, ապա Ծառայությունը ենթակա չէ Պատվիրատուի կողմից վճարման, այդ դեպքում դրամական միջոցները, որոնք տեղափոխվել են Կատարողի հաշվին կարող են վերադարձվել Պատվիրատուին իր կողմից պաշտոնական նամակի ուղարկման դեպքում, ընդ որում նամակում պետք է նշվեն Պատվիրատուի բոլոր ռեկվիզիտները: Փոխանցված միջոցները կարող են օգտագործվել նաև Կատարողի կողմից այլ ծառայությունների մատուցման համար:

4. **Սերտիֆիակտի ժամկետի երկարաձգման կամ վերարտադրման համար լրացուցիչ պայմաններ:**

4.1 Սերտիֆիկատի երկարաձգումը:

4.1.1 Սերտիֆիկատի երկարաձգում՝ ՀԿ–ի կողմից Պատվիրատուի դիմումի հիման վրա, որը ուղղվում է Կատարողի կողմից դեպի ՀԿ, նոր Սերտիֆիկատի արտադրում, որի դեպքում Պատվիրատուի տվյալները մնում են անփոփոխ Subject դաշտում այն Սերտիֆիակտի համար, որ ենթակա է երկարաձգման, և նշվում է Սերտիֆիակտի գործողության նոր ժամկետը, որն իր հերթին ընտրվում է Պատվիրատուի կողմից Կատարողի կայքում:

4.1.2 Սերտիֆիկատի երկարաձգումն իրականացվում է միայն այն Սերտիֆիկատների համար, որոնք վաղաժամկետ չեն ճանաչվել անվավեր:

4.1.3 Կատարողը մատուցում է ‘Սերտիֆիակտի երկարաձգում” ծառայությունը միայն այն սերտիֆիկատների համար, որոնք Պատվիրատուն ստացել է Կատրողի կողմից Ծառայության մատուցման շրջանակներում:

4.1.4 Կատարողը ուղղում է Պատվիրատուին նրա կողմից գրանցման համար էլեկտրոնային փոստի հասցեների վրա ծանուցում, որով առաջարկվում է երկարաձգել Սերտիֆիկատը ոչ ուշ, քան Սերտիֆիկատի ժամկետի ավարտից 30 օր առաջ:

4.1.5 Կատարողն ընդունում է Պատվիրատուից պատվեր “Սերտիֆիակտի երկարաձգման” ոչ շուտ, քան 60 օր մինչև գործող Սերտիֆիկատի գործունեության ժամկետի ավարտը, բաց ոչ ուշ, քան 30 օր առաջ՝ Սերտիֆիկատի ժամկետի գործունեության ավարտից:

4.2 Սերտիֆիկատի վերաթողարկում:

4.2.1 Սերտիֆիկատի վերարտադրություն՝ ՀԿ–ի կողմից, Պատվիրատուի միջոցով ուղղված հայտի հիման վրա, նոր Սերտիֆիկատի արտադրություն, որը գործում է մինչև հին Սերտիֆիկատի գործողության ժամկետը: Սերտիֆիկատի վերարտադրությունն իրականացվում է Սերտիֆիկատում նշված տեղեկատվության փոփոխման համար, մասնավորապես՝ Սերտիֆիկատ տնօրինողի բաց բանալու մասին տեղեկատվության փոփոխման համար: Սերտիֆիկատի վերարտադրման դեպքում հին Սերտիֆիկատը հետ է կանչվում ՀԿ–ի կողմից:

4.2.2 Սերտիֆիկատի վերարտադրոթյունը իրականացվում է միայն գործող սերտիֆիկատների համար, այն է, այդպիսիների, որոնց գործողությունը չի դադարեցվել վաղաժամկետ, և նրանց գործողության ժամկետը չի լրացել:

4.2.3 Կատարողը մատուցում է Սերտիֆիկատի վերարտադրում Ծառայությունը միայն այն Սերտիֆիկատների համար, որոնք Պատվիրատուն ստացել է Կատարողի կողմից իրականացված Սերտիֆիկատ ստանալու Ծառայություն տրամադրման դեպքում:

4.2.4 Կատարողը ընդունում է Պատվիրատուից պատվեր Սերտիֆիկատի Վերարտադրման Ծառայությունը գործող Սերտիֆիկատի գործողության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ, քան 5 օր մինչև գործող Սերտիֆիկատի գործողության ավարտը:

5. Ծառայության պատվիրում

5.1 Սերտիֆիկատի պատվիրում ծառայությունն իրականացվում է Պատվիրատուի կողմից Անձնական Կաբինետի միջոցով կամ այցելելով Պատվիրատուի գրասենյակը:

5.2 5.2. Պատվերի դեպքում Պատվիրատուն ինքնուրույն ընտրում է.

- Սերտիֆիկատի գործողության ժամկետը – ցանկացած Ծառայություն պատվիրելու դեպքում
- Սերտիֆիկատի տեսակը – առաջին անգամ Սերտիֆիկատը գնելու դեպքում:

5.3 Ծառայության հայտի դեպքում Պատվիրատուն տրամադրում է Կատարողին անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև նախօրոք ձևավորված "Հարցում Սերտիֆիկատ ստնալու համար" (CSR) ինչն իրենից ներկայացնում է էլեկտրոնային հաղորդագրություն, որի ձև սահմանված է RFC-2986 փաստաթղթով: Պատվիրատուից Կատարողին Սերտիֆիկատ ստանալու հարցում ուղարկելու առանձնահատկությունը, այդ թվում՝ ձևավորված "Հարցում Սերտիֆիկատ ստնալու համար" (CSR) ընթացակարգը հրապարակված է Կատարողի կայքում (https://support.comodo.com/index.php?/Default/Knowledgebase/List/Index/19/csr-generation):

5.4 Ծառայություն ստանալու Պատվերը չի կատարվում, եթե Ծառայությունը չի մատուցվում Պատվիրատունին ՀԿ –ի կողմից մերժում ստանալու հետևանքով:

6. Սերտիֆիակտի հետ կանչելը

6.1 Կարողը իրավասու է պայմանների խախտման դեպքում Սերտիֆիակտը վաղաժամ դադարեցնելու համար հարցում ուղղել ԿՀ:

6.2 ՀԿ–ն իրավասու է, առանց նախօրոք զգուշացնելու, հետ կանչի Սերտիֆիկատը մինչև Սերտիֆիկատի գործողության ավարտը հետևյալ դեպքերում.

- Կատարողի դիմումի համաձայն, որն ուղղվում է ԿՀ այն դեպքում, երբ կատարվել են 6.1. կետով նախատեսված իրադարձությունները :
- ԿՀ–ի նախաձեռնությամբ, հետևյալ դեպքերում՝

  - ✓ Եթե ԿՀ–ին հայտնի է դարձել Պատվիրատուի նույնականացնող տվյալների փոփոխության մասին կամ նրա մասին, որ Պատվիրատուի Սերտիֆիակտում գրանցված տվյալները չեն համապատասխանում իրականությանը:
  - ✓ Եթե ՀԿ–ն համարի, որ Պատվիրատուի գործունեությունը վնաս է հասցնում ԿՀ–ին:
  - ✓ Պատվիրատուի կողմից Բաժանորդային պայմանագրի խախտման դեպքում:

6.3 ԿՀ–ի նախաձեռնությամբ Սերտիֆիկատի գործունեության դադարեցման դեպքում, անկախ պատճառից, դրամական միջոցները, որոնք փոխանցվել են Կատարողի հաշվին չեն վերադրձվում:

7. Ծառայությունների գինը

7.1 Սույն Հավելվածում Ծառայությունների գները բերված են Կատարողի կայքում:

8. Վեճերի լուծման կարգը

Կողմերը բոլոր վեճերը լուծում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Սույն Հատուկ Պայմանները տեղադրված են Կատարողի հաճախորդների սպասարկման կենտրոնում և հրապարակված վերջինիս պաշտոնական կայքում (www.abcdomain.am):

10. Սույն Հատուկ Պայմաններում եզրույթներն ունեն նույն նշանակությունը ինչ ԸԴՊ-ում: